ՀՀ ԿԳՄՍՆ-ի
վերապատրաստող կազմակերպություն
«Երևանի Լեոյի անվան հ.65 ավագ դպրոց» ՊՈԱԿ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Սովորողների ստեղծագործական մտքի զարգացումը գրավոր և բանավոր խոսքի միջոցով

ԴՊՐՈՑ՝ Երևանի Հակոբ Օշականի անվան հ.172 հիմնական դպրոց

ՈՒՍՈՒՑԻՉ՝ Ռուզաննա Ասոյան

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ՈՒՍՈՒՑԻՉ՝ Անահիտ Զոհրաբյան

Երևան 2023

Բովանդակություն

Ներածություն 3

Գրականության ակնարկ 5

Գործնական համատեքստ 8

- Սովորողների ստեղծագործական մտքի զարգացումը գրավոր խոսքի միջոցով
- Սովորողների ստեղծագործական մտքի զարգացումը բանավոր խոսքի միջոցով

Ամփոփում 17

Օգտագործված գրականության ցանկ 18

Ներածություն

Աշակերտին սովորեցրու՛ այն բանին, որ նրա համար աներևակայելի լինի այլ կերպ, քան սեփական ուժերով որևէ բան յուրացնելը, որ նա ինքնուրույնաբար մտածի, որոնի, իրեն դրսևորի, զարգացնի իր ենթադրությունները, իրենից մշակի անսասան մարդու:

Դիստերվեգ

Ստեղծագործական մտքի զարգացումը ուսումնական գործընթացի կարևորագույն պահանջներից մեկն է, որը ներառված է նաև հանրակրթության պետական չափորոշչում: Տարաբնույթ ուսումնական առաջադրանքները,որոնց կատարումը ստեղծագործական մոտեցում է պահանջում, օգնում են աշակերտների կապակցված խոսքի, ուշադրության և ստեղծարար մտքի զարգացմանը, նպաստում նրանց երևակայության և աշխարհայացքի ձևավորման աճին: Դա պայմանավորված է նախնառաջ սովորողների գրավոր և բանավոր խոսքի առանձնահատկություններով,մտածողությամբ, համարձակ մտքեր արտահայտելու կարողությամբ,նաև առարկայական ծրագրերի պահանջներով:

Դեռևս նախադպրոցական և կրտսեր տարիքում երեխաներն անկաշկանդ արտահայտում են մտքեր,անում համարձակ դատողություններ,գնահատում իրենց միջավայրում տեղի ունեցող դեպքերն ու երևույթները: Սակայն աստիճանաբար այդ դատողություններն ու վառ մտքերը կարող են «խամրել», եթե միջին դպրոցում առարկայական դասաժամերին չկարևորվեն ինքնուրույն խոսք կառուցելու, ինքնատիպ մտածողության և դրանց վերարտադրման համար բառապաշար

«ժողովելու» աշխատանքները:

Դպրոցի հիմնախնդիրներից է օգնել աշակերտին՝ ճիշտ կապակցված, գրագետ և անկաշկանդ արտահայտելու իր գրավոր և բանավոր խոսքը, իր հույզերն ու զգացմունքները, ազատորեն հաղորդակցվելու՝ համարձակորեն իր մտքերը՝ որպես գրավոր խոսք, հանձնելով թղթին:

Ուսուցման կազմակերպման ընթացքում ուսուցիչը մեթոդական բազմաթիվ գործիքներից իր հմտությամբ պետք է ընտրի այնպիսի անհրաժեշտ մեթոդներ և հնարներ, որոնք սովորողներին հնարավորություն կտան ինքնուրույնաբար աշխատելու, հետազոտելու, ստեղծագործելու, սեփական մտածողությամբ եզրակացություններ անելու, հանձնարարված առաջադրանքը վերլուծաբար կատարելու:

«Ստեղծագործությունը,-գրում է պրոֆ. Ի.Վ.Ստրախովը,- մարդու գործունեության բազմակողմանի գործընթաց է…., որը միաժամանակ աշխատանքի և տաղանդի միասնությունն է: Այն գիտակցական, նպատակաուղղված, համառ, երկարատև և հաճախ գերծանր աշխատանք է, որը

պահանջում է մարդու մտավոր ունակությունների ակտիվություն, բնավորության կամային որակներ,բարձր և կայուն աշխատունակություն »:

Հետազոտության թեմայի արդիականությունը: Քանի որ համաշխարհային համընդհանուր փոփոխությունների պայմաններում անհատի ստեղծագործ մտքի դրսևորումները հիմնարար դեր ունեն անձի ինքնակայացման,առաջընթացի և հաջողությունների գրանցման գործում, հանրակրթական դպրոցին ուղղված պահանջների մեջ որոշակիորեն ընդգծվում է սովորողների ինքնուրույնության և ստեղծագործական նախաձեռնության զարգացման միտումը,որը համարվում է ուսուցման արդյունավետության բարձրացման զորեղ միջոցներից մեկը:

Հետազոտության նպատակը: Իմ հետազոտական աշխատանքի հիմնական նպատակը տարաբնույթ առաջադրանքների միջոցով սովորողների ստեղծագործական մտքի և կարողությունների զարգացման ու նրանց բանավոր և գրավոր խոսքի բարելավման վրա դրանց ներգործուն ազդեցության ուսումնասիրությունն է : Չէ՞ որ գրելն ու կարդալը կրթության այն հիմնական ունակություններն են, որոնց միջոցով իրականացվում է սովորողի ուսումնառության ողջ գործընթացը: Հատուկ պետք է ընդգծել, որ միջին դպրոցում ուղղորդված աշխատանք պետք է տանել սովորողների որոնողական-հետազոտական գործունեության, հաղորդակցական, ստեղծագործական կարողությունների և ինքնուրույնության զարգացման ուղղությամբ:Հայոց լեզվի և գրականության բուն նպատակադրումը ի վերջո աշակերտների բանավոր և գրավոր խոսքի զարգացումն է:

Հետազոտության խնդիրներ:Հետազոտության նպատակին հասնելու համար իմ առջև դրել եմ հետևյալ խնդիրները.

- Ուսումնասիրել սովորողների ստեղծագործական մտքի և կարողությունների ձևավորման վերաբերյալ գիտամեթոդական գրականություն և դիտարկել նրանցում արծարծված հիմնական մոտեցումները:
- Հետազոտական աշխատանքի հիմնախնդրի տեսանկյունից դիտարկել մայրենիի,հայոց լեզվի և գրականության չափորոշիչներն ու առարկայական ծրագրերը, ինչպես նաև դասագրքերը:
- Հիմնվելով դասավանդման սեփական փորձի վրա՝ գրել հետազոտական աշխատանք՝ցույց տալով առաջադրված նպատակների վերջնարդյունքները:

Գրականության ակնարկ

Ներկա ժամանակներում հասարակությունը նորանոր պահանջներ է ներկայացնում անձին: Ակնհայտ է, որ անցյալին կառչած, գիտելիքը սոսկ յուրացման գործընթաց դիտարկող անձը հազիվ թե կարողանա այսօր օգտակար և մրցունակ լինել գրեթե բոլոր մասնագիտություններում: Դեռ ավելին՝ մասնագիտական շուկայում մրցակցությանը դիմակայելու համար մասնագետին անհրաժեշտ են կարողունակություններ, որոնց շնորհիվ հնարավոր է գտնել նոր գաղափարներ, խնդրի անսովոր լուծումներ՝ արագ արձագանքելու միջավայրի փոփոխություններին, մշակելու յուրօրինակ ռազմավարություններ: Արդի աշխարհը պահանջում է ուրույն մտածող, ստեղծագործ, վառ երևակայությամբ օժտված հավակնոտ մասնագետներ, քանի որ արդեն իսկ բավարար չեն միակ ճիշտ լուծում ունեցող խնդիրները, անհրաժեշտ են այլընտրանքներ, այլընտրանքային լուծումներ: Նշանակում է՝ մերօրյա ստեղծարար անձը պահանջված է հասարակության զարգացման բոլոր փուլերում, դեռ ավելին՝ ժամանակակից կյանքի արագ փոփոխվող տեմպն ապահովում են հենց ստեղծարար, ճկուն անձինք: Այսօր ստեղծարարությունը դառնում է մարդկային գործունեության հիմնական անկյունաքարը և մասնագիտական գործունեության հաջողության գրավականը:

Ա. Գրեցովի մոտեցմամբ ստեղծարարությունը ներառում է՝

- ստեղծագործական գործունեության ինտելեկտուալ նախադրյալներ, որոնք թույլ են տալիս ստեղծել նախկինում անհայտ, նոր բան:
- Գիտելիքների և կարողությունների նախնական համախումբ՝ նոր բան ստեղծելու համար:
- Անձնային որակներ, որոնց շնորհիվ հնարավոր է արդյունավետ գործել անորոշության պայմաններում, դուրս գալ կանխատեսելիի սահմաններից, լինել ինքնաբուխ:
- Մետաստեղծագործություն, այսինքն՝ մարդու կենսական սկզբունք, որը ենթադրում է դատողություններում և գործողություններում կարծրատիպերից հրաժարում, նոր բան ստեղծելու և ընկալելու, իրեն և աշխարհը փոխելու ցանկություն, ազատության, ակտիվության և զարգացման արժեորում:[1]

Ստեղծարարության դրսևորման համար անհրաժեշտ է ստեղծել խրախուսող միջավայր: Գոյություն ունեն ներքին և արտաքին խոչընդոտներ, որոնք խանգարում են ստեղծարարության դրսևորմանը: Մենք ընդհանրացված տեսքով ներկայացնում ենք մի շարք հեղինակների (Ա. Ն. Լուկ, Ա. Մասլոու, Լ. Բ. Երմոլաևա-Տոմինա, Վ. Մ. Վոսկոբոյնիկով) առանձնացրած

1. Պողոսյան Սոնա, Մեթոդական ուղեցույց, Երևան, 2018:
2. Грецов А. Г., Тренинг креативности для старшеклассников и студентов. СПб., Питер, 2007, էջ 208:

պատնեշները: Դրանք են՝ անհաջողության վախը, ինքնաքննադատությունը, ծուլությունը, մտքի իմպուլսիվությունը, ճանաչողական եսակենտրոնությունը, նախապաշարմունքները, սեփական և ուրիշների գործերը կազմակերպելու ու պլանավորելու անկարողությունը, անվստահությունը և այլն:

Ստեղծարարության զարգացման համար առանձնացված են վարժություններ (վարժությունները վերցված են Ա. Գրեցովի համանուն գրքից], որոնք ենթադրում են անձի ստեղծագործական պատնեշներից ազատագրում, հնարավորություն են ընձեռում ձեռք բերել անորոշ իրավիճակներում կողմնորոշվելու, թիմային ստեղծագործական աշխատանքի հմտություններ:

Ներկայացնենք դրանցից երկուսը, որոնք հաջողությամբ կարելի է կիրառել նաև համագործակցային դասերի ժամանակ:

Վարժություն 1՝ «Միջանկյալ օղակ» :Մասնակիցներին կարդում են երկու՝ միմյանց հետ տրամաբանորեն չկապվող նախադասություններ, որոնցից յուրաքանչյուրում նկարագրվում է ինչ-որ իրադրություն, օրինակ՝ կարելի է առաջարկել այսպիսի տարբերակներ՝

1. Լապտերասյան վրա նստել է սարյակը: Ուսանողը չկարողացավ հանձնել քննություն հոգեբանությունից:
2. Խանութ բերել են անորակ երշիկ: Տատիկը վերցրեց թերթ և այն ձեռքին՝ գնաց ինչ-որ տեղ:
3. Ավազակը կոտրել է ապակի: Առևտրի կառավարչի պաշտոնը բարձրացրել են մինչև խանութի տնօրենի աստիճանի:

Մասնակիցների խնդիրն է մտածել միջանկյալ օղակ, այսինքն այն, ինչ կարող է տեղի ունենալ այդ երկու իրադրությունների միջև այնպես, որ դրանցից առաջինը դառնա մյուսի պատճառը: Աշխատանքի ժամանակն ամեն իրադրության համար 4-6 րոպե է:

Հոգեբանական իմաստը՝ Վարժությունը սովորեցնում է փնտրել արտաքնապես ոչ միանման իրադրությունների միջև կապող օղակ, դուրս գալ անմիջական ներկայացված իրադրության սահմաններից, ընդհանրացնել մտքերը:

Վարժություն 2՝ «Անհավանական իրադրություն» :Մասնակիցներին առաջադրվում է մտածել ինչ-որ երևակայական իրադրության մասին, որի ի հայտ գալն անհավանական է կամ քիչ հավանական: Նրանց խնդիրն է պատկերացնել, որ այդպիսի իրադրություն ամեն դեպքում տեղի է ունեցել և առաջարկել որքան հնարավոր է շատ հետևանքներ մարդկության համար:

Վարժությունն իրականացվում է 3-5 անդամներով ենթախմբերում: Ամեն իրադրության համար տրվում է 5-6 րոպե: Անհավանական իրադրության մի քանի օրինակներ՝

- Երկրի վրա ծանրության ուժը կմեծանա հինգ անգամ:
- Բոլոր ծավալուն երկրաչափական մարմինները կվերածվեն տափակի:
- Ամպերից կկախվեն պարաններ մինչև գետին:
- Բոլոր մետաղները կվերածվեն ոսկու:
- Մարդիկ կսովորեն ճիշտ կարդալ միմյանց մտքերը:
- Այս վարժությունը կարելի է անցկացնել մի քանի տարբերակներով: Օրինակ՝ քննարկման համար մի քանի ենթախմբերի կարելի է առաջադրել միևնույն իրադրությունը: Յուրաքանչյուրն ասում է մի գաղափար, կրկնությունը բացառվում է: Եթե խմբի յուրօրինակ մտքերը սպառվում են, խաղից դուրս է գալիս: Իսկ եթե քննարկման համար առաջադրում են տարբեր իրադրություններ, ապա մրցույթ չի անցկացվում, դրա փոխարեն մասնակիցներն ասում են 3-5 միտք, որոնք առավել յուրահատուկ են:

Երկար տարիներ մանկավարժների կողմից կատարված դիտարկումներն արձանագրում են սովորողների ստեղծագործական ընդունակությունների անկման հակում:Այս հարցի ուսումնասիրությունը նաև հոգեբանների հետազոտության տեսադաշտում է:Նրանց ուսումնասիրությունները հաստատել են,որ դեռ վաղ հասակից երեխայի անձի ինտելեկտուալ և ստեղծագործական զարգացման միջև առկա են էական տարբերություններ:Գոյություն ունեն երկու տեսակի օժտվածություններ՝ յուրացված և ստեղծագործական[3]: Տեսակետն այն մասին, որ ստեղծագործական ընդունակությունները չեն համընկնում ինտելեկտուալի հետ, գիտության մեջ տարածում է գտել դեռ անցած դարում:Ստեղծագործ երեխայի համար կարևորը ոչ թե գիտելիքի յուրացումն է, այլ սեփական մտքի աշխատանքը:Այդ պատճառով էլ շրջապատը,հատկապես դասընկերներն ու ուսուցիչները այդպիսի երեխաներին չեն հասկանում,քանի որ նրանք չեն տեղավորվում բոլորի կողմից ընդունված վարքի ու զարգացման ստանդարտի մեջ:[4] Ժամանակակից մանկավարժագիտության տեսանկյունից ուսուցումը պետք է ուղղված լինի անհատի զարգացմանը,իսկ յուրաքանչյուր անձ զարգանում է յուրովի:Ստեղծագործելը դիտարկվում է որպես անձի զարգացման կարևորագույն մեխանիզմ:

Քանի որ դպրոցական տարիները անձի կայացման տարիներ են, ապա ուսուցչի գլխավոր խնդիրը պետք է լինի սովորողների ստեղծագործ անհատականության համար պայմաններ ապահովելը:

3. Նալչաջյան Ա., Հոգեբանության հիմունքներ, Երևան, 1997:

4. «Մանկավարժական միտք» հանդես, Երևան 2011թ. , հ. 1-2,էջ 8-11:

Գործնական համատեքստ

Հայտնի է, որ դասը ուսումնական գործընթացի հիմնական բաղկացուցիչ մասն է: Ուսուցչի և աշակերտի ուսումնական գործունեությունը համատեղվում է դասի ժամանակ:Դասի ընթացքում մյուս կարողությունների,հմտությունների հետ զարգացվում են նաև սովորողների ստեղծագործական ունակություններն ու կարողությունները:

Ինչպիսի՞ն է ստեղծագործական կարողությամբ օժտված աշակերտը:Ինչպե՞ս պետք է աշխատի ուսուցիչը,ի՞նչ մեթոդներ, հնարներ, միջոցներ կարելի է կիրառել, որպեսզի զարգացվի սովորողների ստեղծագործական միտքը:

Ահա այս և այլ հարցերի պատասխանները փորձել եմ ներկայացնել հետազոտական ուսումնասիրության միջոցով: Հետազոտական աշխատանքի ուսումնասիրության համար որպես թիրախային խմբեր ընտրվել են միջին դպրոցի երկու դասարաններ՝ 5-րդ և 7-րդ (դասարանների կազմը կներկայացվի հետազոտության ընթացքի փուլում) : Աշխատանքի իրականացման համար հիմք են հանդիսացել այդ դասարաններում իմ դասավանդման փորձը, կուտակած հմտությունները, մեթոդական նյութերի վերաբերյալ հավաքագրած պաշարն ու աշակերտների ստեղծագործական աշխատանքների պահպանված նյութերը:

Հետազոտական այս աշխատանքի իմ նպատակն է ներկայացնել այս դասարաններում սովորողների ստեղծագործական մտքի զարգացման դրսևորումները, որոնք իրականացվել են թե՛ բանավոր, թե՛ գրավոր խոսքի միջոցով իմ կողմից ընտրված մեթոդների կիրառմամբ: Սեփական փորձով ներկայացվելու են այն մեթոդներն ու մեթոդական հնարները,որոնք կիրառվել են մայրենիի, հայոց լեզվի և գրականության դասաժամերին՝ նպաստելով աշակերտների ստեղծագործական կարողությունների զարգացմանը:

Յուրաքանչյուր նպատակի հասնելու համար պետք է հաղթահարել որոշակի խնդիրներ, գտնել դրանք լուծելու եղանակները:

Ստեղծագործական մտքի զարգացմանը հասնելու միջին դպրոցի սովորողների հիմնական խնդիրներն են՝

- կարողանալ ստեղծագործաբար կիրառել ձեռք բերած գիտելիքները
- դրսևորել ստեղծագործական երևակայություն
- ենթադրություններ անել կամ ինքնուրույնաբար դատել
- կարողանալ ուսումնական նյութի մեջ գտնել գլխավորն ու երկրորդականը, հիմնավորել

Ուսուցիչն էլ իր հերթին պետք է կարողանա որոնել ու գտնել ուսուցման այնպիսի մեթոդներ և հնարներ, որոնք կխթանեն սովորողների ստեղծագործական ունակությունների զարգացումը: Յուրաքանչյուր դաս պետք է իր մեջ պարունակի ինչ-որ բան, որը կառաջացնի զարմանք ու հիացմունք, մի բան, ինչը երկար կհիշվի: Դա կարող է լինել հետաքրքիր փաստ, անսպասելի բացահայտում, ինքնատիպ հարցադրում,ստանդարտ մոտեցում: Ստեղծագործական մտքի զարգացման համար ցանկալի է կիրառել ուսուցման ակտիվ մեթոդներ: Սրանց կիրառման դեպքում սովորողի գործունեությունը ձեռք է բերում արդյունավետ, ստեղծագործական-որոնողական բնույթ:

Քանի որ սույն հետազոտությունն առավելապես հիմնված է տարիների ընթացքում իմ կուտակած դասավանդման փորձի, այլ ոչ թե փաստական նյութերի և անհրաժեշտ վկայությունների վրա, մինչ բուն հետազոտական ընթացքի շարադրումը ներկայացնում եմ հետազոտվող թեմային ուղղակիորեն առնչվող մի քանի համընդհանուր դիտարկումներ, որոնց մասին կարևոր եմ համարում արտահայտվել:

Ստեղծագործական մտքի զարգացման առումով հայոց լեզուն այն հնարավոր գործիքակազմը չունի, ինչ, ասենք, գրականությունը, սակայն բազմափորձ ուսուցիչը որոնում ու գտնում է մեթոդական արդյունավետ ձևեր՝ դրանք կիրառելով դասի կամ դասից դուրս տարվող աշխատանքների ընթացում:Հայոց լեզվի և ստեղծագործական կարողությունների զարգացման աշխատանքների զուգակցումը մեծ նախադրյալներ են ստեղծում սովորողների ընդհանուր և մասնագիտական պատրաստականության բարձրացման համար, քանի որ լեզվական գիտելիքների խորությամբ ըմբռնումը նպաստում է նրանց ստեղծագործական ունակությունների զարգացմանը՝ մղելով գեղեցիկ խոսք ստեղծելու մեծ ցանկության, իսկ այդպիսի ընդունակություններ ունեցողներն էլ առավել լավ են ըմբռնում լեզվական նյութը:

Ստեղծագործական մտքի զարգացման գործում մեծ դեր կարող են խաղալ ամենից առաջ հայոց լեզվից տրվող տնային աշխատանքները, որոնք մեծ նշանակություն ունեն ուսուցանված նյութի յուրացման ու ամրապնդման գործում:Չպետք է միայն հայոց լեզվի դասագրքից հանձնարարել այս կամ այն վարժությունը և ուրիշ ոչինչ:Նման դեպքերում ծույլ աշակերտները հաճախ օգտվում են ուժեղներից, նույնիսկ ձեռքից ձեռք անցած դասագրքերի վրա կատարված նշումներից և իբրև ինքնուրույն կատարված աշխատանք ներկայացնում ուսուցչին:Մինչդեռ այսօրվա պահանջն այլ է:Ուսուցիչը պետք է ելնի անհատականացված ուսուցման դիրքերից և տարբեր աշակերտների տարբեր վարժություններ հանձնարարի, վարժության աղբյուր դարձնի

նաև գրականության, պատմության, ֆիզիկայի և այլ առարկաների դասագրքեր, վերլուծական-որոնողական պահանջներ ներկայացնի, որ յուրաքանչյուր աշակերտ հենվի իր նախածանոթ գիտելիքների վրա և միայն ինքնուրույն աշխատանքով, ստեղծագործական որոնումներով հասնի հանձնարարության կատարմանը:

Անհրաժեշտ է մեթոդական արդյունավետ հնարներ կիրառել սովորողների բանավոր խոսքը, նրանց ստեղծագործական մտածողությունը զարգացնելու համար: Պետք է գիտակցել, որ բանավոր խոսքի թերությունները փոխանցվում են գրավորին: Պատահական չէ,որ աշակերտները դժվարանում են կանոնավոր խոսք կառուցել, առանց թղթի ինքնուրույն բանավոր ելույթ ունենալ և բանավոր խոսքի այդօրինակ աղքատությամբ էլ ավարտում են դպրոցն ու կյանք մտնում: Սովորողների ստեղծագործական խոսքը զարգացնելու լավագույն ուղին նրանց խոսքի թերությունները աստիճանաբար շտկելն է:Այդ դեպքում նրանց խոսքը գնալով կծաղկի, ստեղծագործական նորանոր երանգներ կառնի, կզուլալվի և կկատարելագործվի: Բանավոր ինքնուրույն խոսքի և ստեղծագործական մտածողության զարգացման դժվարին աշխատանքը պետք է իրականացնել գործնական տարաբնույթ վարժությունների բովում՝ պայքար ծավալելով սերտողության գերակայության դեմ: Անհրաժեշտ է պահանջել, որ աշակերտները գիտակցաբար մեկնաբանեն լեզվական և գրական նյութերը, ասածը հիմնավորեն ինքնուրույն օրինակներով:

Ինքնուրույնության և ստեղծագործական կարողությունների զարգացման գործում մեծ է գրավոր խոսքի դերը, մասնավորապես գրավոր տարաբնույթ աշխատանքների մեջ կարելի է առանձնացնել փոխադրությունը և շարադրությունը՝ իրենց բազմաբնույթ տարատեսակներով:

Շարունակ թարմացնելով դրանց թեմատիկան և կատարելագործելով արդյունքների վերլուծության մեթոդական ձևերն ու եղանակները՝ պետք է հասնել այն բանին, որ աշակերտները կարողանան ստեղծել անթերի,պատկերավոր ու գեղեցիկ խոսք: Փոխադրությունը զարգացնում է աշակերտների հիշողությունը, ինքնուրույն մտածողությունը, ստեղծագործելու կարողությունը՝ նախապատրաստելով շարադրություններ գրելու առավել դժվար աշխատանքին: Լավագույն արդյունք է ստացվում այն դեպքում, երբ փոխադրելիս սովորողներն ազատություն են ստանում սյուժեն իրենց ցանկալի հունով տանելու, եզրակացությունների հանգելու:Լավ կլինի, որ ուսուցիչը չկասեցնի աշակերտների ստեղծագործական մտքի թռիչքը, չզայրանա առանձին աշակերտների՝ առաջին հայացքից անհեթեթ թվացող հորինվածքներից:Այս մտքին մեկնաբանություն կդառնա Պ. Սևակի իմաստուն խոսքը.« Լեզուն, մտածողություն լինելով, նաև գործիք է,իսկ այդ գործիքն ապրում է բանելիս և բանելով, հակառակ դեպքում փտում է կամ ժանգոտում:»

- Սովորողների ստեղծագործական մտքի զարգացումը գրավոր խոսքի միջոցով

Մտքերը գրավոր շարադրելը բարդ գործ է և պահանջում է հմտություններ և վարժեցում: Այս դժվարությանն էլ բախվեցի 5-րդ դասարանում (32 աշակերտ) առակի թեման ուսուցանելիս,երբ թեմայի ավարտին որպես ծրագրային պահանջ փորձեցի աշակերտներին հանձնարարել ինքնուրույն հորինել որևէ առակ:
Հետազոտական աշխատանքի համար նպատակ դարձավ գրավոր խոսքի միջոցով սովորողների ստեղծագործական մտքի և ունակությունների զարգացումը, որի իրագործման համար մշակեցի քայլաշար՝ իմ առջև դնելով հստակ խնդիրներ, որոնց քայլ առ քայլ հասնելու համար որոնեցի և գտա համապատասխան մեթոդներ և հնարներ՝ ցանկալի արդյունք ակնկալելով:
Դասավանդման իմ փորձը վկայում է, որ արդյունավետ աշխատանք է ստացվում, երբ միջին դպրոցում ստեղծագործական շարադրանքները տրվում են դասարանում ուսուցչի և աշակերտի համատեղ և մանրակրկիտ աշխատանքից հետո: Միջին դպրոցի սովորողների համար ստեղծագործական միտքը զարգացնող լավագույն աշխատանքներ են՝

- կարծիք, տեսակետ կարդացածի մասին
- նամակ՝ տարբեր ոճերով
- որևէ առարկայի, երևույթի,բնության երևույթի նկարագրություն
- մտերիմ մարդու,սիրած գրական հերոսի նկարագիր-դիմանկար
- տպավորություն էքսկուրսիայից
- պատմության սկիզբ կամ ավարտ հորինելու առաջադրանքներ
- որևէ գրական ժանրով՝ հեքիաթ, առակ, պատմվածք հորինելու և ստեղծագործելու փորձ

Առակների ուսուցումը կարևոր է ինչպես աշակերտների արժեհամակարգի, տրամաբանական, ճանաչողական կարողությունների, այնպես էլ ստեղծագործական ունակությունների զարգացման համար:

Շարադրանք ստեղծելու դասը պայմանականորեն կարող է ունենալ հետևյալ հիմնական բաղադրամասերը՝

- նախապատրաստական աշխատանք կամ համառոտ զրույց
- շարադրանքի թեմային առնչվող որևէ չափածո տեքստի , արձակ բնագրային հատվածի կամ նկարի ցուցադրություն, երաժշտության ունկնդրում
- զրույց թեմայի շուրջ՝ բաց հարցադրումներով
- ստեղծագործական աշխատանքի պլանի կազմում
- բառային աշխատանք

Իմ ակնկալած արդյունքն արձանագրելու համար մշակեցի դասարանում իրականացվող աշխատանքների հետևյալ մեթոդական քայլաշարը՝

- աշակերտները ուսուցիչի օգնությամբ առաջարկում են կերպարներ
- կերպարների բնութագրման համար ընտրում են բառեր
- կերպարվեստի ժամին կերպարները պատկերների են վերածում
- բացահայտում են կերպարների այլաբանությունը. ու՞մ կամ ի՞նչ են խորհրդանշում նրանք
- գտնում են համանուն բարոյախոսությամբ այլ առակներ և վերլուծում գաղափարը
- կազմակերպում են դերախաղ

Դասարանում աշխատանքն սկսվում է հետևյալ կերպ. նախքան առակի շարադրանքին անցնելը աշակերտներին հանձնարարել էի կերպարվեստի ուսուցչի օգնությամբ նկարել դաշտային տեսարան, որի մեջտեղում մի գեղեցիկ միայնակ ծաղիկ է ծաղկել, իսկ նրա շուրջը պտտվում է բազմերանգ գույներով մի թիթեռ: Խմբային աշխատանքն սկսում ենք մուտք - նկարներով: Այսպիսի աշխատանքները նպաստում են աշակերտների երևակայության, գունային զգացողության, գույների միջոցով զգացմունքները թղթին հանձնելու կարողությունների զարգացմանը:Նկարելը զարգացնում է նրանց գեղագիտական ճաշակը,գեղեցիկը նկատելու, զգալու և գնահատելու ունակությունները,հարստացնում հոգեպես :

Ապա իմաստի ընկալման փուլում արդեն հստակեցնում եմ դասի նպատակին հասնելու պահանջները: Դրան հասնելու համար ընթերցում եմ ընկերասիրության, միայնակ մարդուն անօգնական չթողնելու, բարության ու մարդասիրության գաղափար պարունակող մի քանի առակներ՝ մղելով աշակերտներին խորհելու նշված գաղափարների շուրջ, հիշելու այդ թեմաներով ասացվածքներ:Ապա իրենց նկարների վրա նրանք ծաղկին ու թիթեռին բնութագրող բառեր ու նկարագրական բառակապակցություններ են գրում, ստեղծում մարդ- ծաղիկ, մարդ-թիթեռ կերպարները: Հերոսներն արդեն ընտրված են, գաղափարի շուրջ մտքերը փոխանակված են, ժանրային և կառուցվածքային առանձնահատկությունների վերաբերյալ աշակերտները գիտելիքներ ունեն:Հանձնարարում եմ խմբային աշխատանքի միջոցով ստեղծել առակ, ընտրել վերնագիր, հագեցնել երկխոսություններով և գրել ու մեկնաբանել առակի բարոյախոսությունը: Դասն ավարտում եմ դերային խաղով,որտեղ որպես առակի հերոսներ հանդես են գալիս աշակերտները՝ ներկայացնելով հենց իրենց մտքում ստեղծագործաբար կերտած կերպարներին:

Ցանկացած շարադրանքի գնահատում նպատակահարմար է իրականացնել սանդղակով,որը նախապես պետք է ներկայացվի խմբին կամ աշակերտին: Ահա ստեղծագործական աշխատանքի գնահատման սանդղակի մի օրինակ՝

Գերազանց	Դրսևորված են երևակայություն և ստեղծագործական ինքնատիպ մոտեցում,մտահղացումը ներկայացրել է համապատասխան ձևով: Լիովին կիրառված են առակի ժանրին բնորոշ տարրերը:
Լավ	Դրսևորված են երևակայություն և ստեղծագործական ինքնատիպ մոտեցում,կիրառված են առակի ժանրին բնորոշ տարրերը:
Բավարար	Երևակայություն մասամբ դրսևորված է,ինքնատիպ մոտեցում մասամբ նկատվում է:

Որպես տնային աշխատանք առաջադրում եմ հորինել առակ՝ տրված թեմայով և համապատասխան ասացվածքներով՝ ներկայացնելով դրանք նկարազարդված գրքույկների տեսքով: Հաջորդ դասին անդրադառնում ենք այդ աշխատանքներին: Արդյունքը տանում է աշակերտների ստեղծագործական կարողությունների զարգացմանը:

- Սովորողների ստեղծագործական մտքի զարգացումը բանավոր խոսքի միջոցով

Գրականության յուրաքանչյուր դաս ստեղծագործական մտքի թռիչք է,երևակայության պայծառացում,հաղորդակցում բարոյականի, գեղեցկի, վեհի հետ:Գրականության դասերի ընթացքում հաճախ եմ նկատում, որ աշակերտները գեղարվեստական պատկերների ընկալման մեծ դժվարություն ունեն, չեն կարողանում դասագրքից դուրս որևէ բնագրային վերլուծություն կատարել,խորհել, երևակայել, ստեղծագործաբար վերարտադրել ընկալածն ու զգացածը: Դասավանդման ընթացքում այս հիմնախնդրին բախվող բազմաթիվ դեպքերի արձանագրմամբ կատարել եմ հետազոտական ուսումնասիրություն՝ ցանկանալով վեր հանել այն խնդիրները, որոնց լուծման համար ըստ նպատակայնության ընտրել եմ հարցադրումների մեթոդը:

Սովորաբար գրականության դասն սկսում եմ դասին առնչվող չափածո կամ արձակ որևէ ստեղծագործության ընթերցմամբ, առածով, ասույթով, թևավոր խոսքով:Եթե բանաստեղծությունը վերածված է երգի, ունկնդրում ենք երգի կատարումը կամ երգում ենք

միասին: Նման մոտեցումը ստիպում է աշակերտներին անընդհատ փնտրել, ծանոթանալ նորանոր ստեղծագործությունների և, ամենակարևորը, տալիս է մտածելու հնարավորություն, զարգացնում գրական ճաշակ:

Ահա գրական թեմայի ուսուցման հետազոտության ընթացքը: Համո Սահյանի «Անտառում»բանաստեղծությունը ծրագրով նախատեսված է ուսուցանել 7-րդ դասարանում: Հետազոտական աշխատանքի նպատակն է ուսումնասիրել 7-րդ դասարանի (31 աշակերտ) սովորողների ստեղծագործական մտքի զարգացումը բանավոր խոսքի միջոցով:Աշխատանքի իրականացման համար ընտրել եմ բաց հարցադրումների մեթոդը:

Ընդհանրապես, Սահյանի պոեզիան բնության հրաշալիքներին և գեղեցկին հաղորդակցվելու բացառիկ հնարավորություններ է ընձեռում: Նախքան բանաստեղծությունն արտասանելը ներկայացնում եմ բնության, մասնավորապես աշնանային անտառի գեղեցկությունները: Ապա առաջարկում մտովի մտնել աշնանային անտառն ու տեսնել, թե ինչ խորհրդավոր գաղտնիքներ կան այնտեղ:Բանաստեղծության մասին խոսում եմ սեղմ՝ ներկայացնելով այն ընդհանուր գծերով:Նպատակս է,որ հաջորդ դասին անգիր ասելու հետ աշակերտները կարողանան ստեղծագործաբար վերլուծել բանաստեղծական պատկերները:Հանձնարարում եմ, որ հաջորդ դասին աշակերտները ներկայանան ստեղծագործական հետաքրքիր «մուտքերով»՝ աշնանը նվիրված նկար, բանաստեղծություն, շարադրանք:Նրանց ուղղորդում եմ, որ աշունը գրականության մեջ գրողներին ոգեշնչման շատ թեմաներ է տվել՝ լուսավոր թախիծ, անդարձ սպասում, սիրո կորուստ ու բերկրանք….

Հաջորդ դասն սկսում ենք ընտրված «մուտքերով»:Լսելով լավագույն աշխատանքները՝ ես նույնպես աշակերտների համար կարդում եմ իմ հորինած բանաստեղծությունը,որի քնարական հերոսներից մեկն աշունն է:

Ամպը որոտաց աշնան երկնքում,
Անձրևի կաթիլն ընկավ ափիդ մեջ,
Կարծես արցունքս էր, որ իմ աչքերից
Անձրևի տեսքով թափվում էր ներքև….

Ասես երկինքն էր ինձանից առաջ
Լուռ արտասվում իմ սիրո համար,
Ու երբ համրաքայլ դու հեռացար,
Աշխարհն ինձ անգույն մի աշուն թվաց:

Քո կերպարանքն ուրվականի պես
Անտես չքացավ թաց մթնշաղում,
Մենակ մնացինք աշունը և ես
Տերևաթափված մեր այս պուրակում:

Ապա բաց հարցադրումների միջոցով փորձում ենք վերլուծել նոր դասի բանաստեղծական պատկերները: Աշակերտներին հարցնում եմ.« Թաց խոտերի մեջ եղնիկի հետքը որոնող որսկանը չէ՞ր ուզում տեսնել աշնան գեղեցկությունները» : Նրանք, մեկը մյուսին լրացնելով, տալիս են տարաբնույթ պատասխաններ.

- Չար որսկանի համար կարևորը եղնիկի միսն է:

- Եթե անգամ նա բարի լիներ և եղնիկին տուն տաներ, միևնույնն է, առանց անտառի նա կտխրեր. անտառը նրա կյանքն է:

Աշակերտների ուշադրությունը բևեռում եմ հետևյալ տողերի վրա՝ « Անտառապահի տնակի առաջ Խարույկն իր խաղաղ ծուխն է ծածանում…»:

Հետևում է հարցը՝ ինչու է արդյոք բանաստեղծն ասում խաղաղ ծուխը:

-Անտառապահը բարի է, նա վառում է չորացած ճյուղերը, և նրա խարույկը անտառի ոչ մի ծառին վնաս չի տալիս:

Պատասխանը խրախուսում եմ և բացատրում, որ բանաստեղծն ավելորդ և անտեղի ոչ մի բառ չի գործածել: Առաջադրվում է նոր հարց. «Իսկ եթե գրված չլիներ,որ օրոր ասողն աշունն է, ինչի՞ց կիմանայիք, որ խոսքը տարվա այդ եղանակի մասին է»*:*

-Եղյամը միայն աշնանն է լինում, - իր կարծիքն է հայտնում մի աշակերտ:

- Փայտահատը ծառերը աշնանն է կտրում,- ասում է մյուսը:

-Նշենին մրսում է, քանի որ թափվել են տերևները, - լրացնում է երրորդը:

Այնուհետև մի քանիսն արտասանում են բանաստեղծությունը: Կրկին վերադառնում ենք ստեղծագործության վերլուծությանը:

- Երեխանե՛ր, ինչու՞ անտառի քունը չէր տանում, թեև աշունն օրոր էր ասում նրան:

- Շշուկներ կային անտառում, դրա համար էլ չէր քնում:

-Մայր եղնիկն իր ձագին էր կանչում:

- Փայտահատը մի հին երգ էր երգում:

Եթե ոչ մեկը չի հիշում տապալված կաղնու խուլ հառաչանքի մասին, ես հիշեցնում եմ ու ավելացնում նոր հարց.

- Ինչո՞ւ էր թեղին անտարբեր հետևում կաղնու խուլ հառաչանքին:

Եթե աշակերտները դժվարանում են, բացատրում եմ, որ անտառը բնության մի մասն է, այնտեղ էլ, ինչպես բնության մեջ ընդհանրապես, գոյության պայքար է. ամեն մեկն աշխատում է երկար գոյատևել:

-Երևի թեղին մի քիչ էլ ուրախանում է, որ իրեն չկտրեցին,- իր մտածածը բարձրաձայնում է աշակերտներից մեկը:

Ստեղծագործաբար մեկնաբանում ենք վերջին միտքը՝ « Հանգստանում էր հողմը բացատում՝ Ականջն ամպրոպի ազդանշանին»: Աշակերտները ներկայացնում են կարծիքներ:Անհրաժեշտության դեպքում միջամտում եմ, որ ամպրոպները գարնանն են լինում: Աշունն ավարտվում է , և նա սպասում է գարնան բացվելուն:

Ուսուցման գործընթացում բաց հարցադրումներով աշխատանքը նպաստեց՝

- հեշտությամբ ընկալելի դարձնել արձակ ստեղծագործությունը
- ապահովել հետադարձ կապ
- մեկնաբանել քնարական հերոսների կերպարները
- վերլուծել չափածո խոսքի պատկերային համակարգը
- զարգացնել ստեղծագործական միտքը և խոսքը
- բանավոր խոսքի միջոցով անմիջական շփում ստեղծել

Դասի ավարտին աշակերտներին տալիս եմ լրացնելու դիտարկման քարտեր:

	Այո	Ոչ	Այլ պատասխան
Դասի թեման հետաքրքի՞ր էր:	28	3	
Թեմայի վերաբերյալ տվել եմ հարցեր:	22	9	
Պատասխանել եմ թեմայի վերաբերյալ հարցերին:	18	13	
Հարցադրումներն օգնեցի՞ն լավ հասկանալու թեման:	29	2	

Ամփոփում

Հետազոտական աշխատանքի շուրջ կատարված ուսումնասիրությունների,տեսական գրականության և վերլուծության արդյունքում եկա հետևյալ եզրահանգումների՝

- Չնայած հիմնախնդրի վերաբերյալ գիտամեթոդական գրականության առկայությանը, այնուամենայնիվ սովորողների ստեղծագործական մտքի՝ գրավոր և բանավոր խոսքի միջոցով զարգացման հիմնահարցը մասնագիտական խոր և արդիական ուսումնասիրությունների կարիք ունի:
- Սովորողների ստեղծագործական մտքի զարգացման հասնելու ճանապարհը բարդ գործընթաց է, բայց միաժամանակ հետաքրքիր ու հետազոտական-որոնողական ջանքեր պահանջող:Յուրաքանչյուր ուսուցիչ ուսումնական գործընթացում ինքը ևս պետք է դրսևորի ստեղծագործական մոտեցում, նպատակասլաց հետևողականություն,որոնի ու գտնի սովորողների ստեղծագործական միտքը խթանող մեթոդական թարմ ու հետաքրքիր ձևեր ու դրանց միջոցով հասնի բանավոր ու գրավոր խոսքի կատարելագործմանը:
- Ստեղծագործական որոնումների ճանապարհին ձեռք բերած գիտելիքներն ու հմտությունները համեմատաբար ամուր ու կայուն են, դրանց շնորհիվ արդյունավետորեն են զարգանում սովորողների տրամաբանական մտածողությունը, քննադատական միտքը, նրանք դառնում են առավել ինքնավստահ, չեն երկնչում նորարարական գաղափարներից,ձգտում են ինքնուրույնության, ինչն էլ նպաստում է անձի լիարժեք զարգացմանը:

Իմ դասավանդման տարիների ընթացքում իրականացնելով բազմաթիվ դասալսումներ,ուսուցիչների հետ բաց քննարկումներ, ինչպես նաև փորձարարական տարբեր դասեր և վերլուծելով հետազոտական աշխատանքի ընթացքում նորանոր մեթոդական նյութեր՝ իմ սույն աշխատանքում ներկայացրի օգտակար ցուցումներ, որոնք, կարծում եմ, կարող են նախանշել սովորողների ստեղծագործական մտքի զարգացման բարդ գործընթացը գրավոր և բանավոր խոսքի տարաբնույթ դրսևորումների միջոցով հնարավորինս հետաքրքիր կազմակերպելու ուղիները:

Այսպիսով, հետազոտությունս ավարտում եմ նշանավոր փիլիսոփա և բանաստեղծ Խալիլ Ջուբրանի հետևյալ իմաստուն խոսքերով.«Ստեղծագործական ընթացքը՝ ստեղծագործականությունը, հոսում է քո միջով, բայց սկիզբ չի առնում քեզնից: Չնայած այն քեզ հետ է, բայց այն քեզ չի պատկանում. դու պետք է քո միջից կյանք տաս նրան »:

Օգտագործված գրականության ցանկ

1. Ասլանյան Ա. , Մեթոդական ուղեցույց 7-րդ դասարան, Երևան, 2006:

2. Թովմասյան Թ., Աբազյան Ս., Մեթոդական ձեռնարկ ուսուցիչների համար, Երևան, 2019:

3. Թորոսյան Կ, Բալայան Ա. և այլք, Մայրենիի դասերի պլանավորում, Երևան, 2016:

4. Խաչատրյան Ս., Ուսուցման արդյունավետ հնարներ, Երևան, 2020:

5. ԿԱԻ, Գնահատման առաջադրանքների նմուշների ժողովածու, Երևան, 2007:

6. Նազարյան Ռ, Ալեքսանյան Թ., Փոխադրության նյութերի ծողովածու , Երևան, 2000:

7. Նալչաջյան Ա., Հոգեբանության հիմունքներ, Երևան, 1997:

8. .«Մանկավարժական միտք» հանդես, Երևան 2011թ. :

9. Պողոսյան Ս., Մեթոդական ուղեցույց, Երևան, 2018:

10. Грецов А. Г., Тренинг креативности для старшеклассников и студентов. СПб., Питер, 2007: